

ԿԱՐԾԻՔ

Գոռ Աշոտի Գալստյանի «Է-ԺԲ դարերի հայոց տոմարի մեկնությունները (պատմա-աղբյուրագիտական ուսումնասիրություն)» Թ.00.05 - «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է VII-XII դդ. հայ տոմարագիտական աշխատությունների քննությանը, հայ միջնադարյան տոմարագիտական մտքի զարգացմանը (դրսևորված տոմարի մեկնությունների մեջ)՝ պատմական փոփոխություններին զուգընթաց: Աշխատանքը կատարված է բարեխղճորեն, դրանում ի մի են բերված հարցի շուրջ նախորդիվ կատարված բոլոր ուսումնասիրությունները, մասնագիտական կարծիքները, որոնց հեղինակը վերաբերվել է միաժամանակ հարգանքով և քննադատաբար: Աշխատանքի մեջ ակներև է նաև հեղինակի սեփական ներդրումը հայալեզու միջնադարյան տոմարագիտական գրականության ուսումնասիրության մեջ, այդ թվում՝ մինչև օրս չդիտարկված սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, տոմարագիտական հաշվարկների ճշգրտումը, միջնադարյան տոմարագիտական մտքի աստիճանական էվոյուցիան:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք ծավալուն գլուխներից՝ 8 ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից, ընդհանուր ծավալով՝ 186 էջ:

Աշխատանքի ներածությունը ներառնում է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ժամանակակյան սահմանների որոշարկումը և դրա հիմնավորումը, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, սկզբնաղբյուրների և նախկինում կատարված հետազոտությունների (մասնագիտական գրականության) ընդարձակ տեսություն, տեսական և կիրառական նշանակությունից, փորձաքննության մասին տեղեկություններից:

Առաջին գլուխը՝ «Է դար. Անանիա Շիրակացին և իր «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագիրը», նվիրված է ուսումնասիրվող թեմայի նյութի, այդ թվում «մեկնություն» հասկացության դիտարկմանը, Ք. հ. VII դ. տոմարագիտական մտքի նվաճումներին, գլխավորապես՝ Անանիա Շիրակացու կենսագրությանն ու տոմարագիտական աշխատություններին: Հանգամանորեն դիտարկված է, մասնավորապես, «Մեկնություն տոմարի Անդրեասայ» սկզբնաղբյուրը: Քննական անդրադարձ է կատարված նաև այն խնդրին, թե ինչպես է տեղի ունեցել Անանիա Շիրակացու ներդրած տերմինների և

կանոնների պահպանման և փոփոխության ընթացքը հետագա դարերում՝ Հովհաննես Իմաստասեր Սարկավազի և Հակոբ Ղրիմեցու աշխատություններում:

Երկրորդ գլուխը՝ «Ժ-ԺԱ դարեր. Հովհաննես Կոզեռնը և իր «Մեկնութիւն տոմարի» բնագիրը» նվիրված է հայ բարձրմիջնադարյան գրականության առավել առեղծվածային և կարկառուն հեղինակներից և ազդեցիկ գործիչներից մեկի՝ Հովհաննես Կոզեռնի տոմարագիտական աշխատություններին: Հեղինակը փորձ է կատարել հնարավորին չափով ի մի բերել պատմական և լեզվաբանական բոլոր տեղեկությունները նրա մասին, այդ թվում՝ իր, կամ իրեն վերագրվող «Տեսիլի» հետ կապված պատմությունը, ուրվագծել նրա աշխատասիրության շրջանակները, դիտարկել է նաև պատմական այն պայմանները, որոնցում առաջ է եկել Կոզեռնի տոմարի մեկնության անհրաժեշտություն, այն է՝ Ծոազատկի իրադրությունը: Այս գլխում շոշափվում է նաև հայոց մեջ Էասյան զատկացուցակի ներդրման ժամանակի և Աթանաս Տարոնացու կողմից հայկական առաջին «Պատճեն տոմարի հայոց» ստեղծման հարցերը, որոնք ևս կապված են եղել Ծոազատկի խնդրի հետ: Այնուհետև հեղինակը կենտրոնացել է Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» աշխատությանը՝ դիտարկելով այն ինչպես հրատարակված, այնպես էլ դեռևս անտիպ սկզբնաղբյուրների հիման վրա՝ զուգահեռելով այն Անանիա Շիրակացու գործերի հետ և վերհանելով կատարված փոփոխությունները և պահպանողականության տարրերը:

Երրորդ գլուխը՝ «ԺԱ դարավերջից – ԺԲ դարերում ստեղծված «Մեկնութիւն տոմարի» բնագրերի ընդհանուր բնութագիրը», նվիրված է այն դարաշրջանի մեկնություններին, երբ առաջ է գալիս հայոց անշարժ տոմարի ստեղծման խնդիրը: Գլխում անդրադարձ է կատարվում Հովհաննես Իմաստասեր Սարկավազի կյանքի և գործունեության հայտնի պարագաներին, հայոց տոմարն անշարժացնելու նրա նախագծին, ինչպես նաև այն հարցին՝ արդյոք տարբեր տեղերում պահպանված բնագրերը հանդիսանում են մեկ աշխատության մասեր թե ոչ, և հանգում է այն եզրակացությանը, որ դրանք միևնույն «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» գործի մասերն են՝ իր քննության մեջ ելնելով այդ տեսանկյունից: Այդ քննությունը՝ հիմնված սկզբնաղբյուրների վրա, անդրադառնում է նաև Անանիա Շիրակացու և Հովհաննես Կոզեռնի կողմից չդիտարկված, ըստ էության՝ իրենց ժամանակի համար նոր տերմինների լուսաբանմանը, ինչպես նաև նահանջի մեկ օրվա և դրա ներդրման խնդրին: Նույն գլխում կատարված է նաև Ստեփանոս Մեծրկա որդու «Մեկնութիւն տոմարի» աշխատության վերլուծությունը, որի շրջանակներում հեղինակը վերականգնել է մինչև այսօր չուսումնասիրված՝ Ստեփանոս Մեծրկա որդու կազմած Զատկացանկը (վերականգնումը բերված է աղյուսակի ձևով), դիտարկում է նրա տերմինները, կանոնները և սահմանումները,

գալով այն եզրակացության, որ Ստեփանոս Մեծրկա որդու աշխատությունը լիովին չի համապատասխանում մեկնության ժանրի պահանջներին, այլ ավելի շուտ նոր անշարժ տոմարի նախագիծ է: Վերջապես, գլխում անդրադարձ է կատարվում Սամուել Անեցու «Մեկնություն տոմարի» ստեղծագործությանը, որն ըստ հեղինակի՝ Հովհաննես Իմաստասեր Մարկավագի տեսության ևս մեկ հաստատագրման եղանակ է պատմական իր շրջանի համար:

Գոռ Աշոտի Գալստյանի ատենախոսությունը ծավալուն և աշխատատար գործի արդյունք է՝ կատարված բարդ և իր էությամբ միջգիտակարգային առարկայի շուրջ, ինչը հեղինակին հաջողվել է լիովին: Աշխատանքի մեջ ակներև են դառնում հայ միջնադարյան տոմարագետների մտքի ուղղությունն ու զարգացումը, նրանց կատարած տոմարական բարեփոխումների կիրառական կարևորությունը, ինչպես նաև ավանդապաշտությունը և Վաղ Միջնադարում մշակված սկզբունքներին հարազատ մնալու ձգտումը: Աշխատանքը թույլ է տալիս տեսնել հայոց տոմարի տրամաբանությունը՝ պատմական խոշոր ընդհանրացման հեռանկարով:

Հատկապես կարևոր և ինքնուրույն է այն միտքը, որ տոմարի միջնադարյան գրեթե բոլոր մեկնությունները ստեղծվել են անհրաժեշտաբար, քրիստոնեական տոների, մասնավորապես, Զատիկի շուրջ ծավալված միջեկեղեցական խնդիրների առիթով: Առանձին կարևորություն ունի Ստեփանոս Մեծրկա որդու Զատկացուցակի վերականգնումը՝ ըստ Հուլյան տոմարի: Հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված բոլոր խնդիրները և ներկայացնել տոմարի հայալեզու մեկնությունների ծավալն ու բովանդակությունը:

Աշխատանքը շարադրված է գրագետ և հարուստ հայերենով, շարադրանքը՝ անկախ հեղինակի նշած «Ժամանակային սահմաններից շեղվելու» ինքնադիտողությանը (էջ 6) միանգամայն հետևողական է իր մեթոդաբանության մեջ:

Ատենախոսության բարձր արժանիքների կողքին, սակայն, այն զերծ չէ մի շարք թերություններից:

1. Ներածության մեջ նշված 4 մեթոդները նշելն ավելորդ կլիներ, եթե ամենասկզբից ներկայացվեր բովանդակային վերլուծության մեթոդը, որով էլ փաստացի կատարված է աշխատանքը, և հետո միայն նշվեր հարակից պատմական (դիաքրոն) եղանակի կիրառման մասին:

2. Ատենախոսության հեղինակը կարծես թե շփոթում է ատենախոսության արդիականությունը ոլորտում չարված գործերի հետ, մասնավորապես շեշտելով ձեռագրագիտական որոշ բնագրերի գիտական շրջանառության մեջ դրված չլինելու

հանգամանքը: Այնինչ թեմայի արդիականությունը կլիներ, թերևս, 7-ից 12-րդ դարերի համաշխարհային պատմության հետ սերտորեն առնչվող հայոց պատմության լուսաբանման կարոտ որոշ հարցերի համատեքստայնացումը/կոնտեքստուալազիացիան, ամփոփումը, ինչը արված չէ: Հետևանքում, հստակ չէ նաև աշխատանքի նորույթը:

3. Անհրաժեշտ է Գլուխ Առաջինի սկզբում ճշգրտել «Հայոց տոմար» (հաճախ շփոթվում է հայալեզու տոմարագիտական *աշխատությունների* հետ, որոնք միշտ չէ, որ վերաբերում են բուն հայոց տոմարին), «պատճեն», «խմբագրություն» հասկացությունները և դրանց տարբերությունները:

4. Էջ 58 - «Տոմար» բառի նշանակությունը զանազան բառարաններում և դրա սահմանումը սկզբնաղբյուրներում որևէ առնչություն չունի մեկնությունների անհրաժեշտության հետ, այդ անհրաժեշտության հիմնավորումը հեղինակը տալիս է՝ Ծաղատկին վերաբերող հատվածները քննելիս:

5. Էջ 60 – Հեղինակը խոսում է նախաքրիստոնեական հայկական զարգացած տոմարի մասին այնպես, ասես այն հայտնի է որևէ սկզբնաղբյուրից, լիովին վստահելով միջնադարյան հեղինակների պնդումներին: Նույնը՝ էջ 129, երբ Հովհաննես Իմաստասեր Սարկավագի պնդումը հայոց «նախամովսեսյան», Հայկ նահապետի կազմած տոմարի մասին, ինչպես և առասպելական դրվագը՝ հայոց ամսանունների՝ Հայկի զավակների անուններից առաջացած լինելու մասին, ընդունվում են իբրև պատմական ճշմարտություն, առանց պատշաճ քննադատության: Մինչդեռ ոչ միայն հայտնի չէ, թե քանի տոմարներ են կիրառվել պատմական Հայաստանի տարբեր վայրերում նախքան Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի ժամանակը, այլև ինչ սկզբունքների վրա են դրանք հենվել: Գիտության ներկայիս պահանջների համապատասխան՝ հայոց նախաքրիստոնեական տոմարի բոլոր վերակազմությունները՝ կատարված Բարձր Միջնադարի հեղինակների կողմից, ենթակա են ստուգման՝ ըստ հնագիտական և հունարեն, ասորերեն և այլալեզու սկզբնաղբյուրների, որն, իհարկե, հեղինակի խնդիրը չէ, բայց որը պահանջում է նրա ընտրած մեթոդը: Առաջարկում ենք առնվազն հավելել հայոց ամսանունների գիտական քննությունները, կատարված Հ. Աճառյանի և Է. Աղայանի կողմից, ինչից պարզ է դառնում, որ դրանք, ինչպես և արեգակնային համակարգը, ներդրված են եղել պարթևական տոմարի նախօրինակով:

6. Ատենախոսությունը կարող էր կրել առավել միջգիտակարգային ու վերլուծական բնույթ, քան կա, եթե դիտարկվեին նաև տոմարական համակարգերի կենցաղավարման հարցերը, օրինակ, ո՞ր համակարգն է կիրառել այս կամ այն պատմիչը, ո՞ր ծիսական տեքստերում է ներդրված այս կամ այն համակարգը և այլն:

7. Ատենախոսության համար շահեկան կլինեն, որպեսզի հեղինակը քննել նաև 8-9 թղ դարերի տոմարական դրսևորումները հայոց մեջ կամ գոնե հիմնավոր կերպով (մատնանշելով սկզբնաղբյուրներ) արձանագրվել, որ մինչև Հովհաննես Կոզեոն հայերը առաջնորդվել են Անանիա Շիրակացու տոմարական առաջարկներով: Ստացվում է, որ ատենախոսության հոչակած 7-12-րդ դարերի ուսումնասիրության հայտը առնվազն թերի է 200 տարվա ուսումնասիրության բացով, ինչից կարելի էր խուսափել, եթե կատարվեր նախորդ կետում նշված լրացումը:

8. Եզրակացությունների մասում որոշ եզրակացություններ գիտական միջավայրում վաղուց քաջ ծանոթ գիտական իրողություններ են, մասնավորապես 1, 3, 23 նն, որոնք անհարկիորեն ծանրացնում են աշխատանքի այդ բաժինը և, որն առավել ցավալի է, որոշակիորեն սքողում են այն կարևոր ձեռքբերումները, որոնք կարելի էր առավել ընդգծել:

9. Ընդհանուր լավ հայերենի դեպքում՝ շարադրանքի մեջ սպրդել են մեր կողմից նկատված հետևյալ վրիպակներն ու խմբագրության կարոտ հատվածները.

ա. միասնականությունն չկա թվականության նշումների մեջ. «մ. թ.» և «մ. թ. ա» թե «Ք. հ.» և «Ք. ա.» (վերջինը գործածվում է էջ 52-ում),

բ. էջ 54-ում՝ «ինդիկտիոյ» բնագրային նշումը բացատրելու համար անհրաժեշտ է բերել *indictio* լատ. տերմինը,

գ. էջ 82-ում անհրաժեշտ է բացատրել «Զատկի տասնչորսյակ օրերը» դարձվածքը,

դ. էջ 156-ում՝ Տեառնընդառաջի կանոնի Սամուել Անեցու կատարած խմբագրության վերաբերյալ՝ «... նշանակում է, որ Տեառնընդառաջը սկսվել է Նավասարդից 1460-ամյա պարբերաշրջանի հետևանքով»: Նախադասությունն առհասարակ իմաստ չունի, եթե չի բացատրվում, թե ինչ կապ ունեն տվյալ միշտ անշարժ և Ս. Ծննդյան ժամկետով հաշվարկված տոնի հետ շարժական Նավասարդը կամ Հայկյան պարբերաշրջանը:

էջ 84-ում՝ «մեզ հիշատակում է», էջ 96-ում՝ «հիմ[ն]ականում», էջ 151-ում՝ «տա[ր]եմուտ» ակնհայտ վրիպակներ են:

Նշված թերություններն ամենևին չեն նսեմացնում ատենախոսության նշանակությունն ու որակը, այլ խորհուրդներ են, որոնք հեղինակը կարող է հաշվի առնել՝ հետագայում աշխատանքը որպես գիրք հրատարակության պատրաստելու համար:

Հետևաբար, կարող ենք հավաստել, որ Գոռ Աշոտի Գալստյանի «Է-ԺԲ դարերի հայոց տոմարի մեկնությունները (պատմա-աղբյուրագիտական ուսումնասիրություն)» վերնագրով Թ.00.05. «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի

հայցմամբ պաշտպանության ներկայացված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը միանգամայն արժանի է հայցվող աստիճանի շնորհմանը:

Որոշակի հավելումների և խմբագրության պարագայում՝ աշխատանքը հետագայում կարող է նաև հանձնվել հրատարակման:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ)

Համայնքային ուսումնասիրությունների գիտխմբի ղեկավար՝



պ.գ.թ. Լ. Մինոյան

Լ. Մինոյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գիտական գծով փոխսնօրեն՝



պ.գ.թ. Տ.Մ. Շալայան

27.05.2024